ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՌԴ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը	Գաբրիել Ղազարյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի առաջին տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետները	2019 թվականի փետրվարի 11-15-ը Ռուսաստանի Դաշնություն (Հարավային Սախալինսկ)
4.	Հրավիրող կողմը	«Ասիայի երեխաներ» մարզական խաղերի միջազգային կոմիտե
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)	«Ասիայի երեխաներ» I ձմեռային միջազգային մարզական խաղերին որպես պատվավոր հյուր ներկա գտնվելը
6.	Քննարկված թեմաները	• Հայաստանում ձմեռային մարզաձևերի զարգացման ուղղությամբ փորձի փոխանակում (գեղասահք, լեռնադահուկային սպորտ), • Սպորտի ոլորտում համագործակցության ընդլայնում (ՌԴ, Ղազախստան, Տաջիկստան, Թուրքմենստան), • Տոկիո-2020 օլիմպիական խաղերից առաջ Հարավային Սախալինսկի մարզաբազաներում հայ մարզիկների համար անվճար ուսումնամարզական հավաքների անցկացման հնարավորություն
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	Հանդիպումներ են կայացել ՌԴ Պետական դումայի պատգամավոր, Պետական դումայի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի կոմիտեի անդամ Մ. Բարիևի, ՌԴ Պետական դումայի պատգամավոր, ականավոր հոկեիստ Վ. Ֆետիսովի, Սախալինի երկրամասի նահանգապետի ժ/պ Վ. Լիմարենկոյի, Սախալինի երկրամասի կառավարության նախագահի տեղակալ, սպորտի ոլորտի համակարգող Ա. Զայցևի, Հարավային Սախալինսկի քաղաքապետ Ս. Նադսադինի, «Ասիայի երեխաներ» միջազգային մարզական

		խաղերի կոմիտեի նախագահ Դ. Գլուշկոյի, ինչպես նաև մի շարք երկրների սպորտի ոլորտի պատասխանատուների հետ:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Ձեռք է բերվել պայմանավորվածություն Հարավային Սախալինսկի քաղաքապետ Ս. Նադսադինի հետ՝ Հայաստան այցելելու վերաբերյալ՝ Շիրակի մարզի քաղաքներից մեկի հետ քույր քաղաքի հարաբերություններ հաստատելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սախալինի երկրամասը Տոկիոյի հետ գտնվում է նույն աշխարհագրական գոտում՝ Սախալինի երկրամասի կառավարության նախագահի տեղակալի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Տոկիո-2020 օլիմպիական խաղերից առաջ Հարավային Սախալինսկի մարզաբազաներում հայ մարզիկների համար անվճար ուսումնամարզական հավաքների անցկացման վերաբերյալ:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկություն է եղել աշխատանքներ կատարել հանդիպումների ընթացքում նախանշված ուղղություններով՝ հստակեցնելով ժամկետներն ու պատասխանատուներին:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը	19.02.2019 թ.